



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 2 Օգոստոսի երեկոյեան, Ազգ.

Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մեջ ընդունեց այցելութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան, գլխավորութեամբ ատենապետուհիին՝ Տիկին Յելիկ Իսաղուլեանի:

Յարգելի հիւրերը յայտնեցին Առաջնորդ Սրբազանին, թէ մասնաճիւղը այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 33րդ տարեդարձը, զոր մեծ շուքով պիտի տօնախմբէ 22 Յոկտեմբերին: Այս առիթով, նախատեսուած են շարք մը ձեռնարկներ, որոնց շարքին՝ երիտասարդներու համար դաստիարակչական դասախօսութիւններ ու հաւաքներ:

Տեղեկութիւններ փոխանցուեցան մասնաճիւղի ընթացիկ աշխատանքներուն, ապա նաեւ Հայաստանի հետ կապերուն մասին: Մասնաճիւղը, իբրեւ ներկայացուցիչը Կլենտէյլի, մասնակցութիւն պիտի բերէ Հայաստանի մեջ կազմակերպուած Համահայկական խաղերուն: Հայաստան մեկնող պատուիրակութիւնը բաղկացած է 83 անդամներէ: Այս խաղերէն անկախ, «Արարատ»ը կապեր հաստատած է Հայաստանի կարգ մը դպրոցներուն հետ ու կը հոգայ անոնց մարզական կարիքները, կատարելով հայրենասուէր գործ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր Հ.Մ.Ը.Մ.ականները եւ բարձր գնահատեց «Արարատ» մասնաճիւղի սերնդակերտ ու հայրենասուէր աշխատանքը: Ան այս առիթով անդրադարձաւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հովուապետական այցելութեան, որ տեղի պիտի ունենայ Յոկտեմբեր 6էն 23: Առաջնորդ Սրբազանը նշեց, որ Վեհափառի այցելութեան նախապատրաստական աշխատանքները

ընթացքի մէջ են, ճշդուած են կարգ մը ձեռնարկներու եւ հանդիպումներու թուականները, ինչպէս՝ դիմաւորումն ու աջահամբոյրը՝ 6 Հոկտեմբերի երեկոյեան, Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, Հայրապետական Ս. Պատարագն ու պաշտօնական ճաշկերոյթը, 16 Հոկտեմբերին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ «Եունիվըրսըլ Հիլթըն»ի մէջ՝ յաջորդաբար, նաեւ այցելութիւններ ծխական կարգ մը շրջաններու: «Արարատ»ի ներկայացուցիչները յոյս յայտնեցին, որ Վեհափառ Հայրապետը առիթ ունենայ հանդիպում ունենալու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց հիր վարչականներուն:

## **PRELATE WELCOMES HOMENETMEN "ARARAT" CHAPTER BOARD MEMBERS**



On Tuesday, August 2, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy board members of the Homenetmen "Ararat" Chapter, headed by Chairlady Mrs. Helig Isagholian.

During the meeting, which took place at the "Sulahian" Reception Hall, the guests reported that this year is their Chapter's 33<sup>rd</sup> anniversary, which will be celebrated on October 22<sup>nd</sup>, and that a number of other events are also being planned such as lectures and gathering geared towards youth.

Reports were also given on the general activities of the Chapter and their relation with Armenia. The guests informed the Prelate that a group of 83 members will soon participate in the Pan-Armenian Games in Armenia, and that the Chapter has also established ties with a number of schools in Armenia and assists in their athletic needs.

The Prelate commended the dedication and service of the members to our community. He reminded the guests that H.H. Catholicos Aram I will be honoring the Western Prelacy with a Pontifical Visit from October 6 to 23 and that the planning is already underway. He noted that the community-wide welcoming will take place on October 6 at St. Garabed Church in Hollywood, the Pontifical Banquet on October 16 at the Universal Hilton, and that the full itinerary will be completed in due time. The guests expressed their wish that His Holiness will have an opportunity to meet with the greater Homenetmen family during his visit.

The visit concluded with the Prelate presenting the guests with mementos.